



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

№ 50-Ա

«29» սեպտեմբերի 2016թ.

2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կրթության պետական տեսչության 2016 թվականի աշխատանքային ծրագիրը՝

Կարգադրում եմ.

1. Հաստատել ՀՀ կրթության պետական տեսչության 2016 թվականի հոկտեմբեր ամսվա ստուգումների ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հրապարակել ՀՀ կրթության պետական տեսչության 2016 թվականի հոկտեմբեր ամսվա ստուգումների և գործողությունների ժամանակացույցները՝ համաձայն հավելվածներ 1-ի և 2-ի:

ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչ՝

Ա. Կարապետյան

Հավելված 2

ՀՀ կրթության պետական տեսչության պետի
2016 թվականի սեպտեմբերի 29-ի N 50-Ա կարգադրության

**2016Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց**

N	Գործողության անվանումը	Կատարման պատասխանատուն	Կատարման ժամկետը
1.	ՀՀ Շիրակի մարզի թվով 47 պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթական գործունեության ուսումնասիրություններ	Ուսումնասիրություն իրականացնող խմբեր	I,II,III տասնօրյակներ
2.	Դիմումներում և բողոքներում, ահազանգերում բարձրացված խնդիրների ուսումնասիրություն կամ ստուգում	Կառուցվածքային ստորաբաժանումներ	I,II,III տասնօրյակներ

Հավելված 1

ՀՀ կրթության պետական տեսչության պետի
2016 թվականի սեպտեմբերի 29-ի N 50-Ա կարգադրության

**2016Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ
Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց**

h/h	Ստուգվող սուբյեկտի անվանումը	Ստուգման ժամկետները
1.	Տեսչավորումներ Երևանի զարդակիրառական արվեստի և ՀՀ Կոտայքի մարզի Նաիրիի, Բյուրեղավանի արհեստագործական պետական ուսումնարաններում	II,III տասնօրյակներ
2.	Ստուգումներ Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի թվով 14 նախադպրոցական ուսումնական հաստատություններում	I, II,III տասնօրյակներ